ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԴՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՆՁԻ ՆԵՐԱՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՑԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴՎԱՐԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արդի գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում հասարակական հարաբերությունների հետագա զարգացման ու կատարելագործման համար առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում տվյալ հասարակարգի զարգացման ներքին հնարավորությունների բացահայտման ու իրացման հասարակական շահագրգռվածությունը։ Կոմունիստական շինարարության փորձը և զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման ՍՄԿԿ տնտեսական քաղաքականությունը վկայում են, որ այդ պրոբլեմը եղել և մնում է ՍՄԿԿ ուշադրության կենտրոնում։ ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումում ունեցած ելույթում ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ սոցիալիստական հասարակարգում կան «հաջող առաջընթացի հսկայական հնարավորություններ, վիթխարի ռեզերվներ։ Բայց դրանք օգտագործելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման մակարդակը բառիս ամենալայն իմաստով»[1]։ ՍՄԿԿ XXVI համագումարին տված հաշվետու զեկուցման մեջ, անդրադառնալով էկոնոմիկայի կառավարման հարցերին, Լ. Ի. Բրեժնևը կրկին նշեց, որ անհրաժեշտ է համախմբել մեր ամբողջ հասարակության ստեղծագործական պոտենցիալը, ի հայտ բերել ու օգտագործել առկա հնարավորությունները[2]։

Հասարակական հարաբերությունների զարգացման ներկա առանձնահատկությունները, երբ արտադրության գիտական կառավարման ու արդյունավետության բարձրացման խնդիրները լուծելիս «մենք պետք է հույսը դնենք ոչ թե լրացուցիչ աշխատուժի ներգրավման, այլ միմիայն աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա»[3], անհրաժեշտ են դարձնում բազմակողմանիորեն վերլուծել կոլեկտիվ խմբային գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմը։ Այդ պրոբլեմի հետազոտությունը հնարավորություն կտա գտնել ու բացահայտել անձի ստեղծագործական պոտենցիալի արդյունավետ օգտագործման ձևերն ու մեթոդները, հասարակական կյանքի համամասնական վերարտադրության պրոցեսին նրա մասնակցության պատճառներն ու եղանակները։ Այդ տեսակետից գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմը հանդես է գալիս որպես արտադրության արդյունավետության բարձրացման սոցիալական միջոցառումների բաղկացուցիչ մաս և, ի վերջո, առնչվում է սոցիալիստական անձի ձևավորման ու դաստիարակության խնդիրներին, որոնց լուծումը պահանջում է որոշակի ժամանակ։

Կոլեկտիվ խմբային գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմի արդիականությունը պայմանավորված է նաև մարքսիստական-լենինյան

---

1 Լ. Ի. Բրեժնև, Ելույթ ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումում։ ՍՄԿԿ Կենտկոմի նոյեմբերյան (1979 թ.) պլենումի որոշումը, Երևան, 1980, էջ 22։

2 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Երևան, 1981, էջ 83։

3 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում։ (Զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում), Երևան, 1976, էջ 70։

փիլիսոփայության, սոցիոլոգիայի ու սոցիալ-հոգեբանության կատեգորիաների համակարգում «սոցիալական ակտիվություն» հասկացության ճշգրտման ու զարգացման հետ։ Բանն այն է, որ գործունեության մեջ անձի ներառնվածության տեսանկյունից անձի սոցիալական ակտիվության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում միասնության մեջ քննել ակտիվության քանակական (գործունեության լարվածություն, արդյունավետություն) ու որակական (արժեքների, շահերի ու նպատակների իրացում) կողմերը։

Մասնագիտական գրականության մեջ կարելի է առանձնացնել մեծ քանակությամբ հետազոտություններ, որոնք նվիրված են անձի սոցիալական ակտիվության ու գործունեության այս կամ այն կողմերի վերլուծությանը։ Այդ հետազոտություններում արծարծված են նաև գործունեության մեջ անձի ներառնվածության ու նրա գործունեության պրոբլեմների սոցիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական կողմերը։ Պետք է նկատել, սակայն, որ անձի ներառնվածության պրոբլեմը դեռևս գտնվում է նախնական հետազոտման փուլում և հատուկ հետազոտման քիչ է ենթարկվել։ Միաժամանակ նշած հետազոտությունները պրոբլեմը քննում են տարբեր տեսանկյուններից, որը լուրջ դժվարություններ է առաջացնում հարցի վերաբերյալ միասնական տեսություն մշակելու ժամանակ։ Հաշվի առնելով այդ առանձնահատկությունները և ելնելով անձի մասին ընդհանուր միասնական տեսության մշակման մարքսիստական պահանջներից, գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմի որոշ տեսանկյուններ անհրաժեշտ է միավորել պատմության մատերիալիստական և մարդու հասարակական էության մարքսիստական ըմբռնման շրջանակներում։ Այդպիսի մոտեցման դեպքում կոլեկտիվ խմբային գործունեության մեջ անձի ներառնվածությունը կարելի է դիտել որպես գործունեության օբյեկտիվ պայմանների ու օրինաչափությունների և անձի ակտիվության միասնություն։

Կոլեկտիվ խմբային գործունեության մեջ անձի ներառնվածությունն ունի երկակի բնույթ։ Մի դեպքում այն կարելի է բնութագրել որպես համատեղ գործունեության անհրաժեշտության գիտակցումն արտահայտող պահանջմունք, որի հիմքում սոցիալիստական հասարակարգում ընկած է հասարակական ու անհատական շահերի միասնությունը։ Բնականաբար, այդպիսի դեպքերում ներառնվելու պահանջմունքն անձի մոտ կոլեկտիվիզմի սկզբունքների ձևավորման արտահայտություն է։ Մյուս կողմից՝ գործունեության մեջ անձի ներառնվածությունը մի այնպիսի պահանջմունք է, որն արտահայտում է անհատականության ինքնահաստատման անձի ուղղվածությունը։ Այս դեպքում արդեն գործունեության կոլեկտիվիստական եղանակը լրացվում է գործունեության արդյունավետությունն ապահովող մրցակցելու պահանջմունքով։ Ինչպես նշել է Կ. Մարքսը, աշխատանքի պրոցեսում «հասարակական կոնտակտն ինքնին արդեն առաջ է բերում մրցակցություն և կենսական եռանդի (animal spirits) յուրահատուկ բարձրացում, որն ուժեղացնում է առանձին անձերի անհատական գործունեությունը»[4]։

Գործունեության մեջ անձի ներառնվածությունը, որպես սոցիալական ակտիվության դրսևորման յուրահատուկ ձև, անկախ այն բանից, թե դրդապատճառների ինչպիսի համակարգով է պայմանավորված, գործառական իմաստով ունի երկու հիմնական ուղղվածություն։ Այդ կապակցությամբ Կ. Դանիլինը նկատում է, որ մի դեպքում անձի սոցիալական ակտիվությունն ուղղված է համատեղ գործունեության նպատակի ու իրացման միջոցների բովանդակության բացահայտմանը, իսկ մեկ այլ դեպքում՝ գործունեության նպատակի պրակտիկ իրացմանը[5]։ Առաջին դեպքում, ներառնվելով գործու-

---

[4] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1953, էջ 343։

[5] К. Е. Данилин, Анализ рефлексивных структур при исследовании малых групп («Теоретические и методологические проблемы социальной психологии». МГУ, 1977, с. 116—117).

նեության նպատակի բովանդակության բացահայտման ու յուրացման պրոցեսի մեջ, անձը հանդես է գալիս որպես հասարակական ու կոլեկտիվ արժեքների, նպատակների ու իդեալների վերարտադրության սուբյեկտ։ Մինչդեռ երկրորդ դեպքում, երբ անձի սոցիալական ակտիվությունն ուղղված է գործունեության նպատակի պրակտիկ իրացմանը, անձը հանդես է գալիս որպես գործունեության առարկայի վերարտադրության սուբյեկտ։ Ընդհանրացնելով գործունեության մեջ անձի ներառնվածության երկու հնարավոր ձևերի առանձնահատկությունները, կարելի է եզրակացնել, որ ներառնվածությունը հանդես է գալիս որպես հասարակական կյանքի զարգացման երկու հիմնական եղանակների դրսևորման ձև։

Առաջին՝ հասարակականի անհատականացման եղանակ, երբ անձը, ներառնվելով գործունեության նպատակի և իրացման միջոցների հասարակական բովանդակության բացահայտման ու յուրացման պրոցեսի մեջ, ձեռք է բերում անհատականության այնպիսի որակներ, որոնք հնարավոր են դարձնում հասարակական կյանքի վերարտադրությանը նրա մասնակցությունը։ Դա նշանակում է, որ հասարակականի անհատականացումը, մի կողմից, անձի սոցիալական դերի իրացում է որպես գործունեություն, մյուս կողմից՝ գործունեության բնույթին համապատասխան ներաշխարհի զարգացում։ Ավելացնենք միայն, որ հասարակականի անհատականացման այդ երկու կողմերը միշտ չէ, որ զարգանում են համամասնորեն։

Երկրորդ՝ անհատականի հասարակականացման եղանակ, երբ, յուրացնելով հասարակականի զարգացման օրենքներն ու օրինաչափությունները, անձը ներառնվում է գործունեության առարկայի պրակտիկ վերարտադրության պրոցեսի մեջ՝ անհատական գործունեությամբ վերարտադրելով հասարակական նշանակություն ունեցող առարկաներ։ Այս դեպքում գործ ունենք հասարակական վերահսկողությանը ենթակա՝ անհատական գործունեությամբ հասարակականի վերարտադրության փաստի հետ։ Ավելացնենք, որ գործունեության մեջ անձի ներառնվածության նշված ոլորտների և դրանցում վերարտադրության տարբեր օբյեկտների (գործունեության առարկա, գործունեության առարկայի արժեքային բովանդակություն) առանձնացումը պայմանական բնույթ է կրում։ Անձի գործունեությունը միաժամանակ հասարակականի անհատականացման ու անհատականի հասարակականացման պրոցես է։ Այդ կապակցությամբ Կ. Մարքսը նշել է, որ վերարտադրության պրոցեսում փոխվում են ոչ միայն օբյեկտիվ պայմանները, այլև արտադրողները[6]։

Այսպիսով, անձի սոցիալական ակտիվությունը պայմանավորված է իրականության վերափոխված վերարտադրության օբյեկտիվ հնարավորություններով և նրա այդ հնարավորությունների գիտակցման ու արժեքավորման աստիճանով։ Իրականության համամասնական վերարտադրությունը պայմանավորված է հասարակական հարաբերությունների բովանդակությամբ, այն բանով, թե որքանով է հասարակարգը համապատասխան պայմաններ ստեղծում մարդկանց ակտիվ գործունեության մեջ ներառնելու համար։ Ավելին, հասարակական հարաբերությունները ոչ միայն որոշում են սոցիալական գործունեության ձևերն ու տեսակները, այլև ծնում համապատասխան պահանջմունքներ, որոնք դառնում են գործունեության մեջ անձի ներառնվածության դրդապատճառներ։ Գործունեության մեջ անձի ներառնվածության հասարակական պայմանավորվածությունից բխում է, որ հասարակությունը չի կարող անտարբեր լինել այն բանի նկատմամբ, թե անձը հարաբերությունների ու գործունեության ինչ ոլորտ է ներառնված և ինչ է վերարտադրում։ Իսկ դա նշանակում է, որ նրա սոցիալական ակտիվությունը մշտապես գտնվում է հասարակության վերահսկողության տեսադաշտում։ Կոնկրետ հասարակական հարաբերությունները, այդ հարաբերություններում աշխատանքի բաժանման աստիճանը և անձի սոցիա-

---

[6] К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-е изд., т. 46, ч. I, с. 483.

լական դրությունը որոշում են գործունեության մեջ նրա ներառնվածության մակարդակը։

Հետազոտելով արտադրության բնույթի զարգացման առանձնահատկությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում, Կ. Մարքսը եկավ այն եզրակացության, որ մարդկային փոխհարաբերությունների զարգացման առանձին փուլերն իրարից տարբերվում են նրանով, թե համատեղ գործունեության անհրաժեշտությունը ինչպիսի՞ օբյեկտիվ գործոններով է պայմանավորված։ Գործունեության մեջ անձի ներառնվածության ու այդ պրոցեսում մարդկանց միջև փոխհարաբերությունների բնույթը բխեցնելով հասարակական կյանքի զարգացման աստիճանից, Կ. Մարքսն առանձնացնում է երեք հիմնական փուլ[7]։ Գործունեության մեջ անձի ներառնվածության առաջին փուլը նա բնութագրում է որպես անձնական կախվածության հարաբերություններ։ Ձևավորման առաջին շրջանում (նախնադարյան համայնական հասարակարգ), քանի դեռ մարդկանց գործունեությունը հիմնականում ունի բնական պահանջմունքի բնույթ, համատեղ կոլեկտիվ գործունեությունը պայմանավորված է հասարակության՝ որպես ամբողջի պահպանման անհրաժեշտությամբ։ Այս շրջանի մարդկային փոխհարաբերությունները կարելի է բնութագրել անձնական-հավասարության կախվածության հարաբերություններ։ Հասարակական կյանքի զարգացման հաջորդ շրջանում (ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգեր) գործունեության մեջ անձի ներառնվածությունը ձեռք է բերում սոցիալ-դասակարգային բնույթ։ Մարդկային փոխհարաբերությունները, լինելով անձնական կախվածության հարաբերություններ (երկու հասարակարգերում էլ շահագործող դասակարգը, իհարկե, տարբեր չափերով, անձնապես կախված է շահագործող դասակարգից), միաժամանակ ստանում են անձնական-իրավական կախվածության բնույթ, որի ժամանակ, սակայն, սեփականությունը ոչ թե կապիտալ է, այլ տիրապետման միջոց[8]։

Գործունեության մեջ անձի ներառնվածության երկրորդ փուլը Կ. Մարքսը բնութագրում է որպես նյութական կախվածության հարաբերություններ (կապիտալիստական հասարակարգ), երբ մարդկանց իրավական հավասարությունը նյութական անհավասարության պատճառով կորցնում է իր իմաստը։

Գործունեության մեջ անձի ներառնվածության երրորդ փուլը Կ. Մարքսը կապում է ազատ անհատականության ու անհատի բազմակողմանի զարգացվածության հետ։ Ի տարբերություն փոխհարաբերությունների նշված երկու փուլերի, սոցիալիզմի պայմաններում կոլեկտիվի խմբային գործունեությունն աչքի է ընկնում մարդկային այնպիսի հարաբերություններով, որոնք, Ա. Մակարենկոյի խոսքերով ասած, կարելի է բնութագրել որպես գործունեության մեջ անձի ներառնվածության «պատասխանատու կախվածության»[9] հարաբերությունների մակարդակ։ Սոցիալիզմի պայմաններում գործունեության մեջ անձի ներառնվածությունը ձեռք է բերում նոր որակ. պատմության մեջ առաջին անգամ նպաստավոր սոցիալական պայմաններ են ստեղծվում ներառնվածության մակարդակի ու ներառնվածության աստիճանի համամասնական զարգացման համար։

Ելնելով գործունեության մեջ անձի ներառնվածության մակարդակի (հասարակականի) ու ներառնվածության աստիճանի (անհատականի) հարաբերակցությունից, անձի սոցիալական ակտիվությունը կարելի է բնութագրել որպես իրականության համամասնական վերարտադրությանը և ինքնահաստատմանն ուղղված ու հասարակության կողմից վերահսկվող գործունեություն։ Վերջինս, իբրև օբյեկտիվ օրինաչափությունների շրջանակներում անձի ստեղծագործական գործունեության ցուցանիշ, միաժամանակ հանդես է

---

[7] К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-е изд., т. 46, ч. I, с. 100—101.
[8] К. Маркс и Ф. Энгельс, Соч., 2-е изд. т. 46, ч. I, с. 281.
[9] А. С. Макаренко, Соч., т. 5, М., 1951, с. 207.

դալիս որպես գործունեության մեջ անձի ներառնվածության աստիճան, իսկ այդ ներառնվածությունը տեղի է ունենում որոշակի սոցիալական խմբի, որպես գործունեության դինամիկ համակարգի, շրջանակներում։ Այդ պատճառով էլ ներառնվածության աստիճանի բացահայտումը կապված է սոցիալական խմբի առանձնահատկությունների բացահայտման հետ։

Անձի սոցիալական ակտիվության ու գործունեության մեջ նրա ներառնվածության պրոբլեմի հետազոտման գործում սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական գրականության մեջ, վերջին շրջանում, լայնորեն կիրառվում է Ա. Պետրովսկու և նրա աշխատակիցների մշակած՝ կոլեկտիվում ներխմբային ակտիվության ստրատոմետրիկ ըմբռնումը։ Վերջինիս մասին Ա. Պետրովսկին գրում է. «Ի տարբերություն ավանդական (բուրժուական—Է. Հ.) սոցիալական հոգեբանության, ստրատոմետրիկ ըմբռնումը զարգացվածության տարբեր մակարդակ ունեցող խմբերն իրարից առանձնացնում է երկու չափանիշով. խմբային գործունեության բովանդակությամբ միջանձնային հարաբերությունների միջնորդավորվածության աստիճանով կամ բացակայությամբ (դրանով ոչ պարզորոշ խմբերը տարբերվում են առավել զարգացած խմբերից) և խմբային գործունեության հասարակական նշանակությամբ (որը հնարավորություն է տալիս բարձր զարգացվածություն ունեցող խմբերի շրջանակներում առանձնացնել կոլեկտիվին)»[10]։ Այսպիսով, համաձայն կոլեկտիվում ներխմբային ակտիվության ստրատոմետրիկ ըմբռնման, խմբի զարգացվածության որոշակի աստիճանում գործունեության մեջ անձի ներառնվածությունը, ի տարբերություն անմիջական կախվածություն ունեցող փոխհարաբերություններով կազմակերպված խմբերի, ուր որպես ներառնվածության դրդապատճառ հանդես է գալիս համակրանքի ու հակակրանքի հոգեբանական մղումը, միջնորդավորված է կոլեկտիվ գործունեության հասարակական նպատակներով ու արժեքներով[11]։

Ամփոփելով ասվածը, նշենք, որ հասարակական հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, հարաբերությունների այդ համակարգում անձի սոցիալական դերն ու դրությունը գործունեության մեջ անձի ներառնվածության կարգավորման հասարակական չափանիշներ են, որոնք հիմնականում բնութագրում են ներառնվածության մակարդակը։

Գործունեության մեջ անձի ներառնվածությունը միակողմանիորեն պայմանավորված չէ միայն սոցիալական օբյեկտիվ պայմաններով։ Ինչպես արդեն նշվեց, անձի սոցիալական ակտիվությունը նախ և առաջ ակտիվ-ընտրողական գործունեություն է, որի շնորհիվ այն դառնում է սոցիալական սուբյեկտի և ոչ թե ցանկացած բիոլոգիական էակի հատկանիշ։ Ինչպես նկատում են Վ. Կելլեն ու Մ. Կովալզոնը, ըստ իրենց սուբյեկտիվ առանձնահատկությունների անհատները տարբեր կերպ են յուրացնում ու արժեքավորում միևնույն պայմանները[12]։ Ասածից հետևում է, որ գործունեության մեջ անձի ներառնվածության աստիճանը պայմանավորված է ոչ միայն հասարակականով, այլև անհատականով՝ իրականության ընկալման ու գնահատման անձնական կարողությամբ։ Վերջինս անձի՝ իրականության մեջ կողմնորոշվելու այնպիսի ներքին հատկանիշ է, որը ձևավորվում է համատեղ գործունեության ու հասարակական նորմերի և արժեքների յուրացման ճանապարհով։ Այդ ամենի հետևանքով, անձի մոտ ձևավորվում են կյանքի ու իրականության ըմբռնման ու գնահատման այնպիսի կողմնորոշումներ, որոնք ձևով անհատական են, իսկ բովանդակությամբ՝ հասարակական։ Հետևաբար, արժեքային

---

10 А. В. Петровский, Психологическая теория групп и коллективов на новом этапе («Вопросы психологии», 1977, № 5, с. 54).

11 А. В. Петровский, Психология межличностных отношений в группах и коллективах («Советская педагогика», 1974, № 4, с. 91).

12 В. Ж. Келле, М. Я. Ковальзон, Теория и история, М., 1981, с. 184.

կողմնորոշումների ձևավորման պրոցեսը (հասարակականի անհատականացման պրոցեսը) կարելի է բնութագրել խմբային նորմերի ու արժեքների բովանդակությունը բացահայտող գործունեության մեջ անձի այնպիսի ներառնվածություն, որի ընթացքում նրա ակտիվությունն ուղղված է գործունեության նպատակի և ձեռքբերման միջոցների ու եղանակների հասարակականորեն ընդունելի չափանիշների տիրապետմանը։ Այլ կերպ ասած, այս մակարդակում գործունեության մեջ անձի ներառնվածությունը և դրսևորած համապատասխան ակտիվությունն ուղղված է խմբային միասնական գիտակցության ձևավորմանը։ Ինչպես իրավացիորեն նկատում է Լ. Ումանսկին, միջանձնային փոխհարաբերությունների միջոցով ստեղծված սոցիալ-հոգեբանական էֆեկտի (խմբային ինտրաէֆեկտ) մեծությունը «կախված է խմբային գիտակցության մեջ անհատական գիտակցության ինտեգրացվածության աստիճանից»[13]։ Ուստի, գործունեության մեջ անձի ներառնվածությունը մշտապես կարգավորվում է հասարակական ու անհատական գործոններով, և չի կարելի դրանցից մեկին առաջնություն տալ մյուսի թերագնահատման հաշվին։

Քննելով գործունեության մեջ անձի հոգեբանական ներառնվածության հարցերը, Բ. Պարիգինը նշում է, որ դրա աստիճանը պայմանավորված է անձի ներքին, հոգեբանական վիճակի համապատասխանությամբ կամ անհամապատասխանությամբ՝ գործունեության առաջադրած պահանջներին[14]։ Նկատենք, սակայն, որ ներառնվածության հոգեբանական ըմբռնումը հիմնականում ելնում է ոչ թե գործունեության պրոցեսում անձի ու խմբի վերակառուցման փաստից, այլ այն բանից, թե որքանով է անձը նախապատրաստված տվյալ գործունեությանը։ Այլ կերպ ասած, ներբեռնվածության հոգեբանական ըմբռնումը հիմնականում տալիս է այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ միևնույն պայմաններում ու հանգամանքներում մարդիկ տարբեր կերպ ու չափերով են ներառնվում միևնույն գործունեության մեջ։ Հետևաբար, գործունեության մեջ անձի ներառնվածության հասարակական ու անհատական դետերմինացիան ելնում է ոչ միայն խմբային և հասարակական նորմերի ու արժեքների սոսկական յուրացումից, այլև՝ համապատասխան կողմնորոշումների ձևավորման հիման վրա անձի ակտիվ-ընտրողական վերաբերմունքից, որը, որպես ներառնվածության արժեքային չափանիշ, բնութագրում է անձի կենսական դիրքորոշման բովանդակությունը։

Ակտիվ դիրքորոշման տեսանկյունից գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմի հետազոտությունը հնարավորություն է տալիս հաշվի առնելու այն առանձնահատկությունները, որոնք հատուկ են նրան որպես ակտիվության սուբյեկտի, և բնութագրում են ակտիվության հիմքում ընկած օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների դիալեկտիկական միասնությունը։ Անձի սոցիալական ակտիվության հիմքում ընկած որակական բնութագրերի (շահ, նպատակ, արժեքային կողմնորոշում և այլն) ամբողջությունը, որպես կենսական դիրքորոշում քննելիս, հնարավոր է դառնում գործունեության մեջ ներառնվածությունը շդիտել որպես գործունեության պայմանների հետ անձի պասիվ համարվողականություն։

Այսպիսով, գործունեության մեջ անձի ներառնվածության անհատական դետերմինացիայի պրոբլեմը, որպես հետազոտման օբյեկտ, ենթադրում է անձին և, ըստ էության, պատասխան է տալիս այն հարցին, թե ընդհանուր հասարակական պայմանների շրջանակներում ինչպիսի՞ որակների դեպքում անձը հնարավորություն կունենա լիարժեք ներառնվելու գործունեության մեջ։ Իսկ դա նշանակում է, որ ներառնվածության անհատական գործոնների գերի պարզաբանումն անմիջականորեն կապված է անհատի սոցիալիզացիայի

---

[13] Л. И. Уманский, Поэтапное развитие группы как коллектива («Коллектив и личность», М., 1975, с. 78).

[14] Б. Д. Парыгин, Научно-техническая революция и личность, М., 1978, с. 77.

պրոբլեմի հետ։ Մանավանդ, որ սոցիալիզացիան ոչ միայն անձի անհատական հատկանիշների ձևավորման պրոցես է, այլև, հենց այն պատճառով, որ դա սոցիալական ծրագրի փոխանցման սոցիալական մեխանիզմ է[15], կատարում է հասարակականի վերահսկման գործառույթ։

Սոցիալիզացիան որպես հասարակական անհատականացում ու վերարտադրություն քննելիս նախ և առաջ պետք է ելնել հասարակական հարաբերությունների կառուցվածքից ու այդ հարաբերություններում անձի սոցիալական դերից ու դիրքից, քանի որ միայն գործունեության համակարգի վերլուծությունը դեռևս ամբողջապես չի բացահայտում մարդկային փոխհարաբերությունների սոցիալական բնույթը։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ է մեկ միասնական պրոցեսի մեջ դիտել գործունեության վերարտադրությանը անձի մասնակցության ինչպես օբյեկտիվ պատճառները, երբ մարդիկ, ըստ իրենց սոցիալական դերի, վերարտադրում են հասարակական հարաբերությունները՝ երբեմն չգիտակցելով, «թե ինչպիսի հասարակական հարաբերություններ են ընդամենը ստեղծվում»[16], այնպես էլ այդ հարաբերություններում անձի ակտիվության սուբյեկտիվ մեխանիզմները։ Այդպիսի մոտեցման անհրաժեշտությունը բացատրվում է նրանով, որ, ունենալով ընդհանուր հասարակական ուղղվածություն, մարդիկ տարբեր կերպ ու աստիճանով են յուրացնում հասարակականը և, հետևաբար, տարբեր կերպ ու աստիճանով մասնակցում հասարակականի վերարտադրությանը։ Ահա թե ինչու գործունեության մեջ անձի ներառնվածությունը պետք է քննել ոչ միայն որպես օբյեկտիվ սոցիալական գործառույթ, երբ անձի սոցիալական դերն ու դրությունը պարտադրում են ու որոշում գործունեության ոլորտն ու ներառնվածության ձևը, այլև որպես անհատականության իրացում։ Այս տեսանկյունից հարցին մոտենալիս՝ սոցիալիզացիան ևս պետք է դիտել որպես հասարակականի յուրացման և հասարակականի վերարտադրության մեջ անձի ակտիվ ներառնվածություն։

Հաշվի առնելով սոցիալիզացվելու միջոցով գործունեության մեջ անձի ներառնվածության նշված երկու հնարավոր եղանակների առանձնահատկությունները, կարելի է ասել, որ ներառնվածության պրոցեսում անձը, մի կողմից, ելնում է օբյեկտիվ օրինաչափությունների և դրանց հնարավոր հետևանքների բացահայտումից (իմացաբանական մեխանիզմ), մյուս կողմից՝ նա իրականության նկատմամբ ցուցաբերում է որոշակի դասակարգային-քաղաքացիական մոտեցում (արժեքային-աշխարհայացքային մեխանիզմ)։ Նշված երկու գործոնների շնորհիվ անձը ձեռք է բերում գործունեության ու վարքի կազմակերպման, պլանավորման ու կարգավորման հնարավորություն (ակտիվ-հարմարվողական մեխանիզմ)։ Այս կապակցությամբ գործունեության մեջ անձի ներառնվածությունը կարելի է բնութագրել որպես սոցիալական այնպիսի ակտիվություն, որը, ելնելով այն բանի գիտակցումից, «որ հանգամանքները նույն չափով են ստեղծում մարդկանց, որ չափով որ մարդիկ ստեղծում են հանգամանքները»[17], ծավալվում է որպես առկա հանգամանքների այնպիսի վերարտադրության պրոցես, որի արդյունքն արդեն անձի սոցիալական դերի ու դիրքի կատարելագործմանը նպաստող վերափոխված հանգամանքներն են կամ, ինչպես Կ. Մարքսն էր նշում, մարդու բնավորություն ստեղծող մարդկային հանգամանքներ[18]։ Հանգամանքների կատարելագործված վերարտադրության (որպես որոշակի սոցիալական խնդրի իրականացման) հնարավորությունները որոշվում են ոչ միայն գործունեության բովանդակությամբ ու կազմակերպվածությամբ, այլև ամենից առաջ հանգամանքների վերափոխման հնարավոր օբյեկտիվ հեռանկարներով։ Ելնելով

---

15 Васил Момов, Человек. Мораль. Воспитание, М., 1975, с. 49.

16 Վ. Ի. Լենին, Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ, Երևան, 1958, էջ 414։

17 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1972, էջ 48։

18 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Սուրբ ընտանիք կամ քննադատական քննադատության քննադատություն, Երևան, 1967, էջ 217։

այդ հեռանկարներից, անձը մոգելավորում է ապագան որպես գործունեության այնպիսի խնդիր, որի լուծումը և լուծման համար թափված ջանքը փոխհատուցվում է ձևով անհատական, բովանդակությամբ հասարակական պահանջմունքների բավարարվածությամբ։ Տեղին է նկատել, որ հասարակարգի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացումը և այդ պրոցեսին անձի մասնակցության աստիճանը որոշվում է նրանով, թե հասարակական ու անհատական նպատակների ու շահերի միջև ինչպիսի համապատասխանություն կա։

Սոցիալիստական հասարակարգը, վերացնելով արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականատիրական վերաբերմունքի հիման վրա ծագող դասակարգային հակասությունները, ստեղծում է հասարակական և անհատական շահերի ու պահանջմունքների համապատասխանության օբյեկտիվ նախադրյալներ։ Այդ պայմաններում, բնականաբար, առաջանում է գործունեության արդյունավետության ու առաջադրված նպատակների իրացման երկկողմանի շահագրգռվածություն։ «Ի տարբերություն կապիտալիզմի, տնտեսության պլանային սոցիալիստական սիստեմը տեխնիկական առաջադիմության արագացումը զուգորդում է ամբողջ աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածության հետ»[19]։ Միաժամանակ, սոցիալիզմը ստեղծում է գործունեության կոլեկտիվիստական եղանակ, որի ժամանակ կոլեկտիվը գործունեության հասարակական ուղղվածությունն ապահովելու պատասխանատվությունը զուգակցում է սովետական մարդու, որպես գործունեության գերագույն նպատակի ու արժեքի, ազատ և ստեղծագործական զարգացման պատասխանատվությանը։ Գործունեության մեջ ներառնվելու սոցիալիստական պայմանները, նպաստելով կոմունիստական աշխատելու պահանջմունքի առաջացմանը, իրենց հերթին, ապահովում են գործունեության մեջ անձի լիարժեք ներառնվածության անհատական որակների ձևավորմանը։ Սակայն չպետք է կարծել, թե սոցիալիստական հասարակարգը, վերացնելով մասնավոր սեփականությունը և ստեղծելով գործունեության կոլեկտիվիստական եղանակ, դրանով իսկ լուծում է գործունեության մեջ անձի ներառնվածության պրոբլեմին առնչվող ամեն մի հարց։ Պրոբլեմի արդիականությունը հենց այն է, որ գործունեության մեջ անձի ներառնվածությունը ոչ թե ավարտվում է հասարակական ու անհատական շահերի և արժեքների միջև համապատասխանության ստեղծման օբյեկտիվ պայմանների առաջացումով, այլ սկսվում։

СООТНОШЕНИЕ ОБЩЕСТВЕННОЙ И ИНДИВИДУАЛЬНОЙ ДЕТЕРМИНАЦИИ ВКЛЮЧЕННОСТИ ЛИЧНОСТИ В ДЕЯТЕЛЬНОСТЬ

ЭДВАРД АРУТЮНЯН

Резюме

В условиях научно-технического прогресса особое значение приобретает заинтересованность общества в раскрытии и реализации внутренних возможностей развития общественного строя. С этой точки зрения в общей системе внутренних резервов общества актуальна теоретическая разработка проблемы включенность личности в деятельность и воспроизводства деятельности. Эти понятия могут срабатывать и давать ожидаемый результат только в том случае, когда учитывается диспозиционная структура личности, а также объективные и субъективные характеристики исполняемой ею социальной роли, т. е. если трактовать эту роль как объективную функцию и как деятельность.

[19] «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Երևան, 1974, էջ 103։